ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ARMAVIR DEVELOPMENT CENTER

0901 ք. Արմավիր, Շահումյան 68ա
Հեռ. (+374 –237) 2 3034
Էլ. հասցե armavirdc.ngo@gmail.com

0901 Armavir, Shahumyan 68a
Tel (+374 –237) 2 3034
E-mail armavirdc.ngo@gmail.com

**ՀՀ ՏԿԵ նախարարին կից**
**հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու**
**ՀԱՅՏ**

Ես՝ Նաիրա Առաքելյանս, հանդիսանալով «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահը, ցանկանում եմ ընդգրկվել ՀՀ ՏԿԵ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:
Ներկայացնում եմ հետևյալ տվյալները.

- Կազմակերպություն՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
  Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա,
  Էլ. փոստ՝ armavirdc.ngo@gmail.com
  Հեռ. 0237 23034

- Առաջադրվող թեկանծու՝ Նաիրա Առաքելյան, ՀԿ Նախագահ
  Անձնագիր՝ [illegible]
  Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Հ.Ավետիսյան 39ա
  Հեռ. 094 502039
  Էլ.փոստ՝ armavirnaira@gmail.com

- Ոլորտում ունեցած փորձառությունը.

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն ստեղծվել է 2005թ.-ին:

ՏԻՄ-երի թափանցիկության և հաշվետվողականության ոլորտում ՀԿ-ն իրականացրել է մի քանի ծրագրեր: Մասնավորապես, 2007թ. ՀԿ-ն իրականացրել է «Բնակչության իրազեկությունն ու տեղեկացվածությունը ՏԻՄ գործունեությունից» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն մարզի քաղաքային և գյուղական համայնքներում՝ պարզելու բնակչության տեղեկացվածությունը ՏԻՄ գործունեությունից և մասնակցությունը տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացներին:
2007թ. ՀԿ-ն իրականացրել է «Համայնքային բյուջեն ի օգուտ բնակիչների» ծրագիրը, որի շրջանակներում ԾՊ քարոզարշավի արդյունքում 3 գյուղական համայնքներում ներդրվել են ագրոնոմի հաստիք, որը, ֆինանսավորվելով համայնքապետարանի կողմից, բնակիչներին մատուցել է անվճար գյուղատնտեսական խորհրդատվություն:

2007թ. ՀԿ-ն 12 գյուղական համայնքներում իրականացրել է համայնքային աջակցության ծրագրեր, որի շրջանակներում համայնքի մոբիլիզացիայի միջոցով վերանորոգվել են 12 բուժ.կետեր:

2008թ. ՀԿ-ն մարզի 3 գյուղական համայնքներում իրականացրել է «Հասնենք թափանցիկ կառավարմանը» ծրագիրը, որի շրջանակներում խթանվել է բնակիչների մասնակցությունը ավագանու նիստերին, համայնքապետարաններում ստեղծվել են անընդհատ թարմացվող հայտարարությունների անկյուններ, ինչպես նաև առաջարկությունների արկղեր, որոնք յուրաքանչյուր ամիս բացվել են բնակիչների, ավագանու և համայնքապետի մասնակցությամբ:

2009թ.-ից իրականացրել է համայնքային զարգացման ծրագրերի մասնակցային մոդելին ուղղված ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվել են հանրային քննարկումներ Tawn Hall ձևաչափով և հաջորդ տարվա համայնքի բյուջեի առաջնահերթությունները որոշվել են համայնքի բնակիչների կողմից: Դրանք հաշվի են առնվել համայնքների ՏԻՄ-երի կողմից: Այսպիսի գործողություններ իրականացվել են Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի մարզերի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներում:

2009թ. մարզի 4 գյուղական համայնքներում ՀԿ-ն իրականացրել է կարողությունների զարգացման ծրագրեր, ստեղծված ակտիվ խմբերի համար իրականացվել են կարողությունների զարգացման դասընթացներ, այնուհետև՝ առողջապահական թեմաներով ուսուցումներ և վերանորոգվել են այդ համայնքների բուժ.կետերը:

2009թ. ՀԿ-ն իրականացրել է «Սահմանամերձ գյուղերի կարքիների գնահատում» ծրագիր՝ ուղղված սահմանամերձ 4 գյուղերի կարքիների գնահատմանը: Իրականացվել է սոցիոլոգիական հարցում և տպագրվել են հարցման արդյունքները:

2010թ. ՀԿ-ն Արմավիրի 2 և Արագածոտնի 4 գյուղական համայնքներում իրականացրել է «Կամավորականության նախաձեռնություն» ծրագիր, որի շրջանակներում 5 համայնքներում մոբիլիզացվել են համայնքի ուժերը և իրականացվել են կամավորականության արշավներ և կատարվել են տարբեր տիպի փոքր համայնքային ծրագրեր:

2011թ. ՀԿ-ն իրականացրել է «Անխափան ոռոգման ջուր համայնքներին» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է ՇՊ քարոզարշավ, պաշտպանվել են գյուղացիների շահերը, բարձրացել է նրանց իրազեկության մակարդակը սեփական իրավունքների մասին:

2012թ. Արարատի մարզի 4 գյուղական համայնքներում նույնպես իրականացվել են համայնքային զարգացման ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվել է բնակիչների մոբիլիզացում, ՏԻՄ-երի հետ համագործակցություն և ներդրում նրանց կողմից:

2013թ. ԱՀԿ ՀԿ-ն մեկ այլ ծրագրի շրջանակներում Արմավիրում ստեղծել էր ՏԻՄ վերապատրաստման կենտրոն, որը վերապատրաստման և խորհրդատվական ծառայություններ է տրամադրել Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի ՏԻՄ-երին: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են այդ մարզերի 11 քաղաքային և գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ:

2021-2025թթ. ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորման 2 ծրագրերի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է համայնքային տարբեր ծրագրեր, Արենի համայնքի կարողությունների և դիմակայունության զարգացում՝ հզորացնելով համայնքին քաղաքականապես և տնտեսապես

առավել ուժեղ դառնալու համար. դասընթացների կազմակերպում, ակտիվ երիտասարդական խմբերի կազմում և գործարկում, համայնքային զարգացման ծրագրերի իրականացում:

ԱԶԿ ՀԿ-ի փորձը տեղական համայնքներին աջակցելու գործում՝ մասնակցային բյուջետավորման իրականացումը խթանելու նպատակով, սկսվեց GIZ-ի կողմից իրականացված «Քաղաքացիական հասարակության ամրապնդում Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրից՝ 2023թ-ին: Ծրագրի շրջանակում ԱԶԿ ՀԿ-ն իրականացրեց Արմավիրի բնակիչների իրազեկման բարձրացում մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ՝ խթանելով համայնքային ներգրավվածությունն ու ուժեղացնելով բնակիչների հնարավորությունը՝ ազդեցություն ունենալու հանրային միջոցների բաշխման վրա: Իր «Town Hall» մեթոդաբանության միջոցով կազմակերպությունը հարթակ ապահովեց հարյուրավոր քաղաքացիների ուղիղ մասնակցության համար՝ ներկայացված ՄԲ նախաձեռնությունների քննարկմանը և տեղեկացված քվեարկությանը:

Այս նախաձեռնության հաջող արդյունքների հիման վրա ԱԶԿ ՀԿ-ն շարունակեց ՄԲ գործընթացներին աջակցելու ջանքերը և «Counterpart International»-ի հետ համագործակցությամբ ընդլայնեց իր աջակցությունը Աշտարակ համայնքում: Թիրախային իրազեկման, կարողությունների զարգացման և հանրային քննարկումների կազմակերպման շնորհիվ Աշտարակը ստացավ շուրջ 50 նախագծային առաջարկ և հասավ քաղաքացիների ներգրավվածության և հետաքրքրության շատ բարձր մակարդակների:

GIZ-ի աջակցությամբ ձևավորված հաջող պրակտիկաները ԱԶԿ ՀԿ-ի կողմից կրկնօրինակվեցին նաև Ծաղկահովիտ և Արենի համայնքներում, որոնք կամավոր միացան ՄԲ գործընթացներին: Հետագայում այս համայնքները միացան «Լավ կառավարման աջակցություն տեղական զարգացման համար Հարավային Կովկասում» ծրագրին, որի շրջանակում ԱԶԿ ՀԿ-ն, իր գործընկեր NGOC-ի հետ, իրականացրեց «Մասնակցային բյուջետավորման ներդրման աջակցություն Հայաստանի համայնքներում» պատվիրակված ծառայությունը: Առաջադրանքը նպատակ ուներ աջակցել Հայաստանի 21 համայնքներին՝ բարձրացնելու քաղաքացիների մասնակցությունը մասնակցային բյուջետավորման գործընթացում՝ համատեղ ստեղծելով քաղաքացիական ներգրավվածության ռազմավարություններ, իրականացնելով արդյունավետ իրազեկում և կազմակերպելով քաղաքացիական մասնակցության հարթակներ:

2025թ-ից ԱԶԿ ՀԿ-ն իրականացնում է Մասնակցային բյուջետավորման մշտադիտարկման ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել մասնակցային բյուջետավորման գործընթացների թափանցիկությունը, ներառականությունն ու հաշվետվողականությունը Հայաստանում՝ վեց համայնքներում փորձնական հանրային մշտադիտարկում ներդնելով և համայնքահեն վերահսկողական մեխանիզմներ ինստիտուցիոնալացնելով:

2022 թվականից Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ-ն կարևոր դեր է խաղում նաև Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն (ԿԽԱ) օրակարգի տեղայնացման գործում: Աշխատելով պետական մարմինների, ՔՀԿ-ների և համայնքների հետ՝ ԱԶԿ ՀԿ-ն հետևողականորեն բացահայտել է, որ ԿԽԱ քաղաքականությունների տեղային իրականացումը Հայաստանի համայնքներում գրեթե բացակայում է:

Այս բացը լրացնելու համար կազմակերպությունը երկու փորձնական համայնքներում՝ Իջևան և Վարդենիս, BREN ծրագրի շրջանակում համատեղ մշակել և գործարկել է տեղայնացված գործողությունների ծրագրեր՝ համահունչ ազգային ԿԽԱ շրջանակին: Այս պիլոտները

հնարավորություն տվեցին ընդլայնելու կանանց ներգրավվածությունը, ուժեղացնելու համայնքային պաշտպանական համակարգերը և ստեղծելու այլ համայնքների հետաքրքրություն ԿԽՍ օրակարգի տեղայնացման նկատմամբ:

Փորձի հաջողությունն ու աճող պահանջարկը ցույց տվեցին անհրաժեշտությունը՝ ԿԽՍ օրակարգի տեղայնացումը դարձնել ինստիտուցիոնալացված գործընթաց ամբողջ երկրում, որպեսզի համայնքները կարողանան մշտապես և ինքնուրույն իրականացնել այդ քաղաքականությունները տեղական մակարդակում:

Եվ 2025թ-ից ԱԶԿ ՀԿ-ն սկսել է արդեն այս գործընթացների իրականացմանն ուղղված ծրագիր՝ նույն BREN ֆինանսավորմամբ: Հիմնական տեսլականն է Հայաստանում ԿԽՍ օրակարգի տեղայնացումը դարձնել ինստիտուցիոնալացված գործընթաց՝ ՏԿԵՆ հսկողությամբ պետական շրջանակի մշակման միջոցով: Նախաձեռնությունն ընդգրկում է նաև ուսումնասիրություն, ջատագովություն (advocacy), շահակիցների կարողությունների զարգացում և հանրային իրազեկման ազգային գործընթաց՝ հատուկ ուշադրությամբ խոցելի ու լուսանցքում գտնվող խմբերի, մասնավորապես՝ եզդի կանանց մասնակցության վրա:

Կից ներկայացվում է՝

- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի պետական ռեգիստրում գրանցման վկայականի քաղվածքի պատճենը,
- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կանոնադրությունը,
- Ոլորտում փորձառությունը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- Նաիրա Առաքելյանի ինքնակենսագրականը:

Հարգանքով՝
ՀԿ Նախագահ Ն. Առաքելյան
10.12.2025